

Newsletter

Senior Students Presenting Results of their Summer Internships

The junior and senior students of the Agribusiness Teaching Center made presentations of their summer internships in Tsaghkadzor on September 1-2. Fifty-five students had their internships in 32 agribusinesses, international agencies, banks, and NGO-s in Armenia, Georgia, Ukraine, and the U.S.

The focus of the internships was assessing the marketing, management,



and finance situation in the related companies. The students mentioned the importance of the knowledge acquired at ATC, which helped them provide feasible technical assistance to the businesses involved. In addition, the 55 ATC students were pleased to report the new knowledge and skills acquired during their 8-week internship programs in agribusiness enterprises.

In addition to good knowledge, the fourth and fifth year ATC students demonstrated good skills of making presentations most of them having good knowledge of English.



Representatives of Dilijan Frolova mineral waters, Kilikia brewery and WB Armenian office expressed their appreciation to ATC for the level of awareness of the interns in today's development trends and priorities in business. In turn, they received certificates of appreciation from ATC for their handy cooperation during the internships.

Director of International Center for Agribusiness Research and Education (ICARE) Daniel Dunn was pleased to mention another successful summer for the ATC 4-th and 5-th year students. ○



Արտադրական պրակտիկայի արդյունքները

Սեպտեմբերի 1-2-ին ՀԳԱ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողները Ծաղկաձորում կազմակերպված սեմինարի ժամանակ ներկայացրին 2005 թ. ամռան ընթացքում անցկացրած արտադրական պրակտիկայի արդյունքները: ԱՌԿ-ի հիսունհինգ ուսանողներ արտադրական պրակտիկա անցան ընդհանուր առմամբ 32 ընկերություններում՝ ագրոբիզնեսի ձեռնարկություններում, միջազգային կազմակերպություններում, բանկերում և հասարակական կազմակերպություններ Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում և ԱՄՆ-ում:

Պրակտիկայի նպատակն էր համապատասխան ընկերությունների մարկետինգային, կառավարման և ֆինանսական իրադրության ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Ուսանողները նշում էին ԱՌԿ-ում ձեռք բերած գիտելիքների կարևորությունը, որոնք օգնել են իրենց՝ հնարավոր տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համապատասխան ընկերություններին՝ ընդամենը ձեռք բերելով ԱՌԿ-ում ստացած տեսական գիտելիքների գործնական կիրառության արժեքավոր փորձ ու հմտություններ: Նրանք գոհունակությամբ նշեցին ընկերությունների ղեկավարության և իրենց հետ աշխատած մասնագետների բարեհամբույր և պրոֆե-

Շարունակությունը՝ 2-րդ էջում

Vardges Hovhannisyán: “Cooperatives Cultivate Community Culture”

Daniel Dunn, Director of ICARE Foundation, together with Vardan Urutyán and Vardges Hovhannisyán, ATC lecturers, took part in 21-st International Cooperative Research Conference in Cork, Ireland. The conference was devoted to discussing contribution of cooperatives to community develop-

ment and culture. ATC professors presented two papers entitled “The role of cooperatives in milk marketing: The case of Armenia” and “Rural credit institutions in Armenia: Credit clubs”.

“It is an undeniable fact that cooperatives play a central role in developing and sustaining local communities

in both urban and rural contexts, not only in providing local services and meeting local needs but also in securing local employment and short circuiting local resources”, said Vardges Hovhannisyán, “In many communities, the coop-

Continued on page 3

Սկիզբը՝ էջ 1-ում

սիոնալ մոտեցումը:

Արտադրական պրակտիկայի արդյունքների ներկայացմանը ներկա էին Դիլիջան Ֆրոլովա, Կիլիկիա գարեջրի գործարանի և Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները, որոնք իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին ԱՈւԿ-ին՝ ուսանողների ընդհանուր պատրաստվածության, ժամանակակից բիզնեսի զարգացման առաջնահերթությունների հարցում նրանց տեղեկացվածության համար: «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի (որի կազմում է այժմ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը) տնօրեն Դենիել Դանը նշված կազմակերպությունների ներկայացուցիչներին հանձնեց շնորհակալագրեր՝ պրակտիկայի ընթացքում ցուցաբերած գործունե համագործակցության համար:

Ամառային արտադրական պրակտիկան ԱՈւԿ-ի հնգամյա գործունեության կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում: Այն լսարանային պարամունքները համատեղում է ձեռնարկությունում կամ կազմակերպությունում ընթացող բուն արտադրական գործունեությանը մասնակցության հետ: Ընդ որում, կարևորվում է նաև պրակտիկանտների աշխատանքի վերաբերյալ ձեռնարկությունների ստացած տեղեկատվությունը, որը հաշվի է առնվում նրանց գնահատելու, ինչպես և, անհրաժեշտության դեպքում, ուսումնական պլանում փոփոխություններ մտցնելու համար:

Պրակտիկան նախատեսված է ԱՈւԿ-ի ուսումնական պլանով: Պրակտիկայի ընթացքում ուսանողների աշխատանքին հետևում են ԱՈւԿ-ի ղեկավարներն ու դասախոսները: Պրակտիկայի համար ստացած գնահատականներն օգտագործվում են ուսանողի ընդհանուր միջին գնահատականի որոշման ժամանակ:

Արտադրական պրակտիկային ներկայացվում են բավական խիստ պահանջներ: Պրակտիկայից հրաժարվելու դեպքում ուսանողը չի կարող շարունակել իր ուսումը ԱՈւԿ-ում: Ի դեպ, հինգ տարվա ընթացքում այդպիսի ընդամենը մեկ դեպք է արձանագրվել: Մնացած դեպքերում պրակտիկան ուսանողների համար եղել է օգտակարի և հաճելիի զուգակցումը: ○

My Development to a Better Person, Better Employee and a better Armenian

Theory without a sound practical experience is analogous to a leaking barrel: no matter how much liquid you put there it will leak away. The same is true for education: unless you are able to successfully implement theory and knowledge gained in the classroom in the real world, that knowledge will not



help and guide you much. This notion is what lies in the concept of internships and this is one of the aspects that the Agribusiness Teaching Center puts much emphasize on. Summer internships are organized annually providing ATC students an invaluable opportunity to major agribusinesses and various other businesses located both in Armenia and abroad.

This year I had a unique opportunity to spend my internship in two entities in the United States of America. From June 13, 2005 to June 23, 2005 I interned at Hope For The City non-profit relief organization. Hope For The City was founded in Minnesota in 2000. Poverty, hunger and disease are three main directions around which operations of the organization evolve. To help fight these three truly global issues Hope For The City collects corporate surplus from retailing and medical companies as well as food distributors spread across the nation and distributes it both locally and internationally. Since the establishment, the organization has donated approximately 230 million USD in wholesale value of goods.

From June 24, 2005 to July 23, 2005 I spent the second part of my internship at GLC Enterprises, Inc and the Cafesjian Family Foundation, Inc.

(CFF). GLC Enterprises, Inc. was established in 1996 as a private company responsible for managing the assets and investments of an American of Armenian descent Gerard L. Cafesjian and his family. The CFF was founded in the same year by Gerard Cafesjian. It is a diverse private foundation engaged in a myriad of activities, the ultimate objective of which is the economic development of the Republic of Armenia. Currently the main directions of the foundation's activities are: renewable energy, media, real estate, financial services, and art. Besides these major fields, which are all located in Armenia, the CFF also accepts grant proposals from non-profit, 501 (c) 3 organizations which aim at developing Armenia through their activities.

Overall, the invaluable exposure to both entities I received plays a crucial role on the way of my development into a better person, into a better employee and into a better Armenian. By working in the warehouse of Hope For The City and sorting the clothes and medical supplies to be sent to my own country I felt very proud that I could in such a small way help Armenia, help in-



dividuals who are going to benefit from that charitable act. Being an employee of the Cafesjian Museum Foundation in Armenia and interning at GLC Enterprises, Inc. and the Cafesjian Family Foundation, Inc. in the USA was very important for me because I formed a thorough understanding of my employer entity's overall operations and became exposed to their working environment.

Ani Movsisyan
ATC 5

Պրակտիկան օգնեց իմ գարգացմանը որպես մարդ, հայ և աշխատող

Continued from page 1

Cooperatives Cultivate Community Culture

Տեսությունն առանց պատշաճ գործնական փորձառության նման է արտահոսք ունեցող տակառի. որքան հեղուկ էլ լցնեք դրա մեջ, միևնույն է այն դուրս կհորդի: Նույնը վերաբերում է նաև կրթության բնագավառին: Եթե դու ի վիճակի չես լսարանում ձեռք բերած տեսական գիտելիքները հաջողությամբ կիրառել իրական կյանքում, ապա այդ գիտելիքը շատ օգուտ չի տա քեզ: Հենց այս հայեցակետն է ընկած ԱՌԿ-ի արտադրական պրակտիկայի հիմքում, որին կենտրոնն առանձնակի ուշադրություն է դարձնում: Ամառային արտադրական պրակտիկաներն ուսանողներին անգնահատելի հնարավորություն են ընձեռում հմտանալու Հայաստանի և արտերկրի ագրոբիզնեսի ձեռնարկություններում և այլ ընկերություններում:

Այս տարի ինձ եզակի հնարավորություն էր ընձեռվել ամառային պրակտիկա անցկացնելու ԱՄՆ երկու կազմակերպություններում: 2005 թ. հունիս-հուլիս ամիսներին ես պրակտիկա անցկացրեցի Hope For The City շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպությունում: Hope For The City-ն հիմնադրվել է Միենտատայի նահանգում 2000 թ.: Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունը պայքարն է աղքատության, սովի և հիվանդությունների դեմ: Այս գլոբալ հարցերի լուծման համար կազմակերպությունն օգտագործում է առևտրից և բուժապասարկումից ստացված հավելյալ եկամուտները և սննդամթերք է բաշխում երկրի ներսում և արտերկրում: Հիմնադրումից ի վեր կազմակերպությունը մոտավորապես 230 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն է տրամադրել:

Պրակտիկայի երկրորդ մասն անցկացրեցի GLC-ում և Գաֆեաճեան ընտանիքի հիմնադրամում: Առաջինը հիմնադրվել է 1996 թ. որպես մասնավոր ընկերություն, որը կառավարում է ամերիկահայ Ջերարդ Գաֆեաճեանի և նրա ընտանիքի միջոցներն ու ներդրումները: Նույն թվականին ստեղծված Գաֆեաճեան ընտանիքի հիմնադրամը մասնավոր հիմնադրամ է, որն ընդգրկված է Հայաստանի տնտեսական զարգացմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներում, ինչպես օրինակ էներգետիկան, լրատվամիջոցները, անշարժ գույքը, ֆինանսական ծառայությունները, արվեստը: Բացի թվարկվածից, ԳԼՀ-ն նաև դրամաշնորհի հայտեր է ընդունում շահույթ չհետապնդող կազմակերպություններից, որոնց գործունեությունը նույնպես ուղղված է Հայաստանի զարգացմանը:

Իմ ձեռք բերած փորձառությունը վիթխարի դեր կխաղա իմ իսկ զարգացման գործում՝ որպես անհատի, աշխատողի և հայի: ԱՄՆ-ում իմ պրակտիկայի ընթացքում ես հպարտության զգացումով էի մասնակցում իմ հայրենիքի բարօրությանն ուղղված աշխատանքներին: Ինքս լինելով Հայաստանում Գաֆեաճեան կազմակերպության հիմնադրամի աշխատակից և անցկացնելով արտադրական պրակտիկա GLC էնթերփրայզիս և Գաֆեաճեան ընտանիքի հիմնադրամի ամերիկյան գրասենյակներում, կարևորում եմ իմ գործատուի ընդհանուր գործունեության հետ մանրամասնորեն ծանոթանալու, ԱՄՆ-ում աշխատանքային միջավայրի հետ շփվելու այս եզակի հնարավորությունը:

erative is a focal point for local community members, guarding and cultivating community culture and enhancing the social fabric of an area through a myriad of activities and projects.” According to Dr. Hovhannisyan, all forms of cooperatives are particularly relevant in today’s context of increasing globalisation in maintaining a sense of local ownership and control, and thereby a cooperative community culture.

Cooperative business is of crucial importance to Armenian agriculture and contributes to the solution of the most of the farm marketing problems and improvement of the bargaining power of farmers. This in turn will serve as a cornerstone in gaining competitiveness locally and

globally as well, Dr. Hovhannisyan believes.

As stated by Vardges, papers presented by Armenian lecturers were welcomed with a barrage of questions. This kind of research forums are places where the future cooperation ties get forged. ○



Վարդգես Հովհաննիսյան. «Կոոպերատիվները որպես համայնքային մշակույթի հիմնասյուն»

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ԱՀԿՄԿ) հիմնադրամի տնօրեն Դենիել Դանը, ԱՌԿ-ի դասախոսներ Վարդան Ուռուտյանը և Վարդգես Հովհաննիսյանը սեպտեմբերին Իռլանդիայի Քորկ քաղաքում մասնակցեցին Միջազգային կոոպերատիվների հետազոտությունների 21-րդ խորհրդածողովին, որը նվիրված էր համայնքային զարգացմանն ու համայնքային մշակույթի բնագավառներում կոոպերատիվների ներդրման հարցերին: ԱՌԿ-ի դասախոսները ներկայացրեցին երկու գիտական հոդված՝ «Կոոպերատիվների դերը կաթի իրացման գործում. Հայաստանի դեպքը» և «Գյուղական վարկային հաստատությունները Հայաստանում. վարկային ակումբներ» վերտառություններով:

Հովհաննիսյանի, կոոպերատիվների բոլոր ձևերն էլ հնարավորություն ունեն գլոբալ զարգացումների այսօրվա համատեքստում պահպանել տեղական սեփականության և վերահսկողության գաղափարը, հետևապես՝ նաև ներհամայնքային գործակցության մշակույթը:



«Անժխտելի փաստ է, որ կոոպերատիվները առանցքային դեր են խաղում թե քաղաքային և թե գյուղական համայնքների զարգացման ու կայացման հարցում՝ ոչ միայն տեղական ծառայություններ մատուցելով և բավարարելով տեղական կարիքները, այլ նաև տեղերում ապահովելով զբաղվածությունն ու տեղական սուղ ռեսուրսները,- ասաց Վարդգես Հովհաննիսյանը,- Շատ համայնքներում համայնքի անդամների ուշադրության սևեռակետը կոոպերատիվներն են, որոնք բազմաթիվ աշխատանքների ու ծրագրերի իրականացման միջոցով ստեղծում են համայնքային մշակույթը, տվյալ տարածաշրջանի սոցիալական հենքը»: Ըստ պրն

Կոոպերատիվ՝ գործակցային, բիզնեսը Հայաստանի գյուղատնտեսության համար վճռական նշանակություն ունի և նպաստում է գյուղմթերքի իրացման հիմնախնդրի լուծմանն ու գյուղացու՝ սակարկելու հնարավորությունների բարելավմանը: Պրն Հովհաննիսյանը հավատացած է, որ դա, իր հերթին, թե գլոբալ առումով և թե տեղական մակարդակում կծառայի որպես մրցունակություն ձեռք բերելու անկյունաքար:

Ինչպես նշեց Վարդգեսը, հայ դասախոսների գիտական հոդվածները ընդունվեցին հարցերի տարափով: Ըստ նրա, այսպիսի գիտաժողովներին մասնակցությունը ապագա գործակցության լավ հիմքեր է ստեղծում: ○

I want to See Their Hopes Realized

By Verne W. House, PhD, Professor, ATC



ATC prepares students to modernize agricultural business, education and research. Our mission statement does not mention hope but for me it is the bottom line. Hope is more than expectation; it is a desire, a wish, a chance.

ATC students dare to hope that they can compete in the job market and function in English. We ATC faculty cultivate hope, like a farmer carefully tends his garden.

Five times in the last four years, my wife Nancy and I have come to Armenia. We are not Armenian; we have no family here; we come only to teach. "Why?" friends ask. I joke that I want to know everything 11 hours before they do, but my serious answer is simple: "I

have good students and good colleagues."

I am an Emeritus Professor at Clemson University. Disregarding my weak hearing, my age is an advantage. I give my wife and my students credit for my success here: they make me functional.

My colleagues, except for the venerable Alex Simonyan and Daniel Dunn, are young but skilled teachers, themselves well-educated, and most are engaged in research. We work hard so that our students learn well. Dr. Dunn, Susanna Mezhlumyan and Vardan Urutyan administer the ATC for the benefit of our students. We soon will have more classroom and office space and a new computer lab. You might ask: Is there any "down-side?" Yes, our old computers and other equipment are becoming a bottleneck.

I teach the role of cooperatives in economic development: western theory and Armenian practice. Each student is a member of a "consulting company."

Their "client" is a cooperative. Task: develop a business plan to increase your client's chance for success. This is fun.

"I am like a farmer who, having discovered he has an unusually large crop of fine apricots, is looking for a market."

I wrote this statement in 2003 when I discovered that we had excellent students wanting graduate study in the US. Vahan Papayan (MS Fresno) and Natalie Nasaryan (MS Ohio State), Class of 2002, proved that ATC students could compete for Graduate Research Assistantships.

Dr. Dunn and I began to "sell" our students. Seven in the 2003 Class were awarded full-funding in excellent US universities. Current "score:" eight graduates are continuing their education in different U.S. universities.

The Class of 2006 has a lot of bright scholars. How will we sell so many good "cots"? The market is shrinking but they are worth the effort. I want to see their hopes realized. ○

Ես ուզում եմ նրանց հույսերն արդարացված տեսնել

Վերն Հաուզ ԱՌՈՎ-ի դասախոս

Ագրոքիզմեսի ուսուցման կենտրոնն ուսանողներ է պատրաստում գյուղատնտեսական բիզնեսի, կրթության և գիտության արդիականացման նպատակով: ԱՌՈՎ-ի առարկայության սահմանման մեջ չի նշված այնպիսի հասկացություն, ինչպիսին է հույսը, բայց ինձ համար հույսն է գլխավոր գաղափարը: Հույսն ավելին է, քան ակնկալիքը, դա ցանկություն է, նաև՝ հնարավորություն: ԱՌՈՎ-ի ուսանողները համարձակվում են հուսալ, որ իրենք կստանան լավ կրթություն, լավ կտիրապետեն ազլերենին, մրցունակ կլինեն աշխատանքի շուկայում: Մենք՝ ԱՌՈՎ-ի դասախոսներս, սերմանում ու մշակում ենք այդ հույսը, ինչպես ֆերմերն է խնամքով մշակում իր այգին:

Վերջին չորս տարվա ընթացքում իմ կինը՝ Նենսի և ես հինգ անգամ եկել ենք Հայաստան: Մենք հայ չենք, մեր ընտանիքն այստեղ չէ: Երբ մեր ընկերները հարցնում են՝ ինչու, ես միշտ կատակում եմ, թե՛ որպեսզի ամեն ինչ ձեռքանից 11 ժամ առաջ իմանամ: Բայց իմ լուրջ պատասխանը հետևյալն է. «Ես լավ ուսանողներ ու լավ գործընկերներ ունեմ»:

Ես Զլեմսոնի համալսարանի թոշակի անցած պատվավոր պրոֆեսոր եմ:

Ի դեպ, չհաշված վատ լսողությունս, մնացած առումներով տարիքս առավելություն եմ համարում և դա նաև Նենսիի և իմ ուսանողների վաստակն է, որոնք ինձ ստիպում է լիարժեք կյանքով ապրել այստեղ:

Իմ գործընկերները - բացառությամբ հազիվ միջին տարիքի մեծարգո Ալեքս Սիմոնյանի և Դենիել Դանի - երիտասարդ, բայց հմուտ դասախոսներ են, լավ կրթություն ստացած և հիմնականում ընդգրկված են հետազոտական աշխատանքներում: Մենք բոլորս ձգտում ենք, որ մեր ուսանողները լավ սովորեն: Դենիել Դանը, Սուսանա Մեժլումյանը և Վարդան Ուրուտյանը ԱՌՈՎ-ը ղեկավարում են՝ մշտապես հաշվի առնելով ուսանողների շահերը: Շուտով կունենանք նոր լսարաններ, գրասենյակային նոր տարածք և նոր համակարգչային լաբորատորիա:

Մի գուցե հարցնեք՝ կա՞ն արդյոք թերի կողմեր: Այո՛ մեր հնացած համակարգիչներն ու այլ սարքավորումներն արդեն նեղություն են պատճառում:

Ես դասավանդում եմ «Կոոպերատիվների դերը տնտեսական զարգացման մեջ. արևմտյան տեսություն և հայաստանյան փորձ» դասընթացը: Յուրաքանչյուր ուսանող անդամակցում է այսպես կոչված «կոոպերատիվական ընկերության»: Նրանց «հաճախորդը» ԱՄՆ գյուղընկալարտամենտի հետ գործակցող կոոպերատիվներից

մեկն է լինում: Հանձնարարությունը հետևյալն է՝ մշակել գործարար պլան՝ հաճախորդի հաջողության հնարավորությունն ավելացնելու համար: Այս ամենը զվարճալի է:

«Ես նման եմ այն ֆերմերին, որը ծիրանի անսովոր շատ բերք է ստացել և շուկա է փնտրում»: Սա ես գրել եմ 2003 թ., երբ տեսա, թե ինչ հիանալի ուսանողներ ունենք, ովքեր ուզում են ուսումը շարունակել ԱՄՆ-ում: 2002 թ. ԱՄՆ համալսարաններում մագիստրոսի ծրագրով սովորող Վահան Պապայանը և Նատալի Նասարյանը ապացուցեցին, որ ԱՌՈՎ-ի ուսանողները կարող են մրցել հետազոտական կրթաթոշակ ստանալու համար:

Դոկտ. Դանը և ես սկսեցինք «վաճառել» մեր ուսանողներին: 2003 թ. խմբից յոթ հոգու լրիվ ֆինանսավորում շնորհիվ ԱՄՆ առաջնակարգ համալսարաններում ուսումը շարունակելու համար: Այս պահին ԱՄՆ համալսարաններում սովորում են ԱՌՈՎ-ի ութ շրջանավարտներ, վեցը՝ մագիստրական, երկուսը՝ դոկտորական ծրագրերով:

2006-ի խմբում մեծ թվով գերազանց ուսանողներ կան: Ինչպե՞ս ենք «վաճառելու» այդքան պայծառ գլուխները: Շուկան նեղանում է, բայց նրանք բոլորն էլ արժանավոր թեմաներ են: Ես ուզում եմ նրանց հույսերն արդարացված տեսնել: ○

New Subjects at ATC

**By
Ani
Kirakosyan
ATC 5**



“International Business” is just in time to study at ATC given the current fundamental shift in the world economy, when national economies are merging into an interdependent global economic system. Not only the subject is new but also the approach of the lecturer is innovative in terms of recognizing International Business as broader than trade or regular business in different countries. In addition, the structure of the lectures allows the students to express their thoughts on globalization and its impact on the international business or discuss different political-economic issues and investment environments in various coun-

ties. We exchange ideas about how to succeed in the global market.

Last year, the fifth year students studied International Trade, but International Business explicitly goes beyond the Trade gate. It rather develops political thinking on global economics. The senior ATC students are enthusiastic about this subject since cases related to the chapters under study are also included in the program. And the topics are evidently modern and supported by practical work.

To me it is clearly obvious that those students who understand economic principles and international issues are going to have a distinct advantage in making sense of the national and international economy and in successfully understanding what is the difference to be made in their own personal vision of the world economy.

At ATC, the subjects are appropriate and the students are promising.

Նոր առարկաներ ԱՌԿ-ում

«Միջազգային բիզնես» առարկան ճիշտ ժամանակին սկսեցինք ուսումնասիրել ԱՌԿ-ում՝ հաշվի առնելով այսօր համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող հիմնարար փոփոխությունները, երբ ազգային տնտեսությունները միասնանում են փոխկախվածության մեջ գտնվող գլոբալ տնտեսական համակարգի մեջ:

Ոչ միայն առարկան է նոր, այլև դասախոսի մոտեցումն էլ է նորարարական այն առումով, որ միջազգային բիզնեսը ներկայացվում է որպես շատ ավելի լայն հասկացողություն, քան տարբեր երկրներում իրականացվող առևտուրը կամ սովորական բիզնեսը: Բացի այդ, դասախոսություններն այնպիսի կառուցվածք ունեն, որ ուսանողներին հնարավորություն է տրվում իրենց մտքերն արտահայտել գլոբալացման և միջազգային բիզնեսի վրա դրա ազդեցության մասին կամ քննարկել տարբեր սոցիալ-քաղաքական հարցեր, տարբեր երկրներում ներդրումային միջավայրի վերաբերյալ հարցեր: մենք մտքեր ենք փոխանակում գլոբալ շուկայում հաջողելու վերաբերյալ:

Անցյալ տարվա հինգերորդկուրսեցիները ուսումնասիրել են միջազգային առևտուր առարկան, բայց միջազգային

բիզնեսը միանշանակորեն շատ ավելի մեծ հասկացողություն է, քան առևտուրը տարբեր երկրների միջև: Այն ավելի շատ զարգացնում է գլոբալ տնտեսության վերաբերյալ քաղաքական մտածողությունը: ԱՌԿ-ի ավագ ուսանողները ոգևորված են այս առարկայով, քանի որ ծրագրի գլուխների մեջ ներառված է նաև ուսումնական նյութին վերաբերող դեպքերի ուսումնասիրությունը: Իսկ թեմաներն ակնհայտորեն ժամանակակից են և ամրապնդվում են գործնական աշխատանքով:

Ինձ համար պարզից էլ պարզ է, որ այն ուսանողներն, ովքեր հասկանում են տնտեսական սկզբունքները՝ միջազգային հարթության վրա, առավելություն կունենան ազգային և միջազգային տնտեսությունից գլուխ հանելու գործում, ինչպես նաև հստակորեն կատկերացնեն, թե ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել համաշխարհային տնտեսության մասին իրենց պատկերացումներում:

Այս առումով, ԱՌԿ-ում մենք անցնում ենք պատշաճ առարկաներ, իսկ ուսանողներն էլ իրենց հերթին են խոստումնալից:

Անի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ԱՌԿ 5

International Congress of Agricultural Economists

Vardan Urutyan, ICARE Deputy Director, Iveta Simonyan, ATC professor and Susanna Mejlumyan, ATC Administrative Coordinator participated in the 11th International Congress of European Association of Agricultural Economists in Copenhagen, Denmark on August 23-28. According to the participants of the Congress entitled “The future of Rural Europe in the Global Agri-food System”, the congress was appealing in terms of developing ATC’s international contacts with research and education entities worldwide.

The Congress was participated by 537 agribusiness teachers and researchers from 37 countries and was hosted by the Food and Resource Economics Institute at the Royal Veterinary and Agricultural University, Copenhagen. Scientific program included invited papers, contributed papers, and posters. ○



Գյուղատնտեսության տնտեսագետների միջազգային կոնգրես

ԱՀԿՄԿ-ի փոխտնօրեն Վարդան Ուրուտյանը, ԱՌԿ-ի դասախոս Իվետա Սիմոնյանը և ԱՌԿ-ի վարչական գծով համակարգող Սուսաննա Մեյլումյանը օգոստոսի վերջին Կոպենհագենում մասնակցեցին Գյուղատնտեսական տնտեսագետների եվրոպական ընկերակցության 11-րդ միջազգային կոնգրեսին: Ըստ մասնակիցների գնահատականի, «Եվրոպայի գյուղական վայրերի ապագան պարենի և գյուղատնտեսության գլոբալ համակարգում» վերտառությամբ կոնգրեսը կարևորվեց ԱՀԿՄԿ-ի և ԱՌԿ-ի՝ գիտակրթական միջազգային կապերի զարգացման առումով:

Կոնգրեսին մասնակցում էին 537 գիտնականներ ու դասախոսներ 37 երկրներից: Կազմակերպիչը Կոպենհագենի Անասնաբուժության և գյուղատնտեսության արքայական համալսարանի Սննդամթերքի և ռեսուրսների տնտեսագիտության ինստիտուտն էր: Կոնգրեսի գիտական ծրագրի շրջանակում ներկայացվեցին իրավիյալ գիտական հոդվածներ և պաստառներ: ○

Celebrating the Fifth Anniversary of the Agribusiness Teaching Center

The Agribusiness Teaching Center students' extracurricular activities include trips to different regions of Armenia for different reasons: visiting agribusinesses, discovering Armenia, and, of course, having fun. The latest such trip took place on September 25, Sunday and was devoted to the fifth Anniversary of ATC. Current ATC students, faculty and ATC alumni participated. The event gathered more than one hundred members of the ATC family.

The destination was rest area Akna Lake, located not far from the Armenian "Vatican", St. Echmiadzin. The weather was very nice, and, looking at the joyful students, one could tell that they were going to have a delightful day. For some students, the trip to Akna Lake was remarkable not only because the ATC family was celebrating the ATC's fifth anniversary, but also because of the long-awaited soccer game. During one of the previous trips the ATC Armenian soccer team was defeated by the ATC Georgian team and the Armenian team was waiting for revenge. The

wonder: the ATC faculty spares no efforts to equip the ATC students with knowledge and experience required by today's labor market.

While everyone was having fun and celebrating, one very special group of people was busy making the barbeque, the delicious smell of which, I am sure, was distracting many players engaged in different games. The



smell of the barbeque was coming from all sides of the resort area which was full of visitors. Although Akna Lake is a nice place for a trip like that, I would like to mention that many things in such areas need to be improved throughout Armenia. The ATC students know better than anybody else how important tourism is for the future of Armenia.

It was twilight already when the bus left for Yerevan. Unquestionably, everyone on the bus was taking the brilliant memories of the day back with them to Yerevan. I would like to use the opportunity and thank Dr. Dunn, the Director of ICARE foundation and the other organizers of the trip for the magnificent day. I am sure everyone is looking forward to the next trip since the ATC trips, besides being very useful in many aspects, are also always full of excitement, adventure and lots of fun which make the memories of that trip last long.

Hayk GHAZARYAN
ATC 5



game was quite interesting. The Georgians lost the game this time, but considering that they had just arrived from Tbilisi after a long trip, they did a great job.

The day was full of a myriad of other exciting activities. The students played volley-ball, cards, frisbee, debated, played guitar and sang. One of the games known as "Mafia" that many students like to play, enabled the "Mafiosi" to once again practice their artistic talent and knowledge of psychology.

The celebration for many alumni was a great opportunity to have their first reunion after graduating the ATC in summer. I was very happy to find out that many of the new ATC graduates had found jobs after graduation. No



Նշվեց ԱՌԼԿ-ի հինգերորդ տարեկարծը

ԱՌԼԿ-ի արտաուսումնական աշխատանքները ներառում են ուսանողների այցելությունները Հայաստանի տարբեր մարզերի ագրոբիզնեսի ձեռնարկություններ և տեսարժան վայրեր: Վերջին այդպիսի ուղևորությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին և նվիրված էր ԱՌԼԿ-ի հիմնադրման հնգամյակին: ԱՌԼԿ-ի ուսանողները, տարբեր տարիների շրջանավարտներն ու դասախոսները ԱՌԼԿ-ի տարեկարծը նշեցին Ակնալճի մոտ, որը գտնվում էր հայկական վատիկանից՝ Սբ. Էջմիածնից ոչ հեռու:

Ումանց համար օրվա խորհրդին գումարվեց նաև երկար սպասված ֆուտբոլի խաղը. բանն այն է, որ ԱՌԼԿ-ի վրացի ուսանողները նախորդ ուղևորություններից մեկի ժամանակ հաղթել էին հայերին և վերջիններս ռեվանշի հարմար առիթի էին սպասում: Խաղն իսկապես հետաքրքրական էր: Այս անգամ վրացիները տանուլ տվեցին, թեև բավական լավ խաղ ցուցադրեցին:

Օրը հազեցած էր նաև բազմաթիվ այլ միջոցառումներով՝ խաղերով, բանավեճերով, երգուպարով: «Մաֆիա» կոչվող խաղի ժամանակ, օրինակ, «մաֆիոզները» ցուցադրեցին իրենց դերասանական տաղանդն ու հոգեբանի իրենց հմտությունները:

Ես ուրախությամբ իմացա, որ շատերն արդեն աշխատում են: Եվ դա զարմանալի չէ. չէ՞ որ ԱՌԼԿ-ը մեծ ջանքեր է գործադրել աշխատանքի շուկայի այսօրվա պահանջներին համապատասխան գիտելիքներ տալու հարցում:

Տոնակատարության մասնակիցներից առանձնանում էր մի հատուկ խումբ, որը զբաղված էր խորոված պատրաստելով: Համոզված եմ, խորովածի անկրկնելի բույրը խանգարում էր խաղերով տարված մասնակիցներին: Ի դեպ, Ակնալճի, որն ընդհանուր առմամբ հարմար վայր է նման միջոցառումների համար, ինչպես և Հայաստանում շատ ուրիշ այդպիսի վայրեր, բարեկարգման, նոր ենթակառուցվածքների կարիք ունի: Մենք՝ ԱՌԼԿ-ի ուսանողներս, թերևս առավել լավ ենք պատկերացնում, թե զբոսաշրջությունն ինչ կարևոր նշանակություն ունի Հայաստանի ապագայի համար:

Օրը հիանալի անցավ՝ դառնալով ևս մեկ հաճելի հուշ մեր ուսանողական կյանքից, որի համար իմ շնորհակալությունն եմ հայտնում դրևտ. Դանին և մյուս կազմակերպիչներին: Համոզված եմ, բոլորը սպասում են հաջորդ ուղևորությանը. լինելով տարբեր տեսանկյուններից օգտակար՝ դրանք միաժամանակ անցնում են հաճելի, արկածներով և ուրախությամբ լի մթնոլորտում:

Հայկ Ղազարյան
ԱՌԼԿ 5